հարկ եղեւ ինձ գրել առ Աստուածապաշտ նորածին թագաւորութիւնդ, շնորհաւորել։ Եւ խնդրեմք ի քէն լալագին պաղատանօք, լուր աղաչանաց մերոց և խնդրուածոց. մի՛ և մի՛ եղիցի այսպիսի իր ի միջի Ձերում. և մի՛ դընել զվէրս ի վերայ վիրաց, և խարան ի վերայ խոցից. եղիցի սէր և խաղաղութիւն ի միջի մերում. «Քանզի Աստուած սէր է, և որ կայ ի սէրն՝ բնակի յԱստուած, և Աստուած ի նմա». քանզի կան բազումք, որք ոչ են տեղեակ սիրոյս այս, հակակայ բանիւք վիճեն ընդ միմեանս, ասելով. «Ես Պօղոսեան եմ, և (միւսն) ես Ապօղոսեան եմ, և միւսն՝ թէ՝ ես Կեփայեան»։ Իսկ մեք զպատուէր Սրբոյն Պօղոսի լսել հայցեմք ի ձէնջ. «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր՝ ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի, և ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս»։ Քանզի և ի մերումս երկրի ի մեր վիճակս՝ փառանդ դաւանութեամբ քրիստոնեայք շատ կան. մեք՝ յիւրեանք բան չենք ասել, քաւ լիցի, այլ իբրեւ զեղբարս ընդունեմք և պատուեմք. այլ և եկօղ պատրիքն երբ առ մեզ կու գան, որչափ մեր կարս է՝ պատիւ և մեծարանս կ'առնեմք, վասն սիրոյն Քրիստոսի։ Նոյնպէս հայցեմք ի մեծութենէդ ձերմէ՝ զփոքրիկ հօտն զայն, այսինքն զազգս մեր, խնամով և սիրով պահեսցես, վասն սիրոյ նախնեացն քոց, և մի՛ սուտակասպասաց բանիւք վիրաւորեսցես զնոսա. զի գրեալ է. «Զեղէգն ջախջախեալ՝ մի՛ բեկցես, և զպատրոյգն առկայծեալ մի՛ չիջուցես»։ Զի անկեալ ի թագաւորութենէ և ի վերջին ստրկութիւն եմք հասեալ. և ըստ Յօբայ՝ ձայնեմք առ Զեզ. «Ողորմեցարուք ինձ, ո՛վ բարեկամք իմ». և մեք և ամենայն ազգս մեր հայցեմք ի յապէնիազ բարերարէն Աստուծոյ, զի անփորձ և անսասան պահեսցէ զթագաւորութիւն քո, և բազում իմաստութեամբ և մեծութեամբ լցուսցէ զքեզ հոգեկան և մարմնական առաքինութեամբ, որպէս երբեմն զմեծն Սողոմոն և զաստուածասէրն Կոստանդիանոս. և պարագայց ամաք և յամերամ ժամանակօք վայելեսցես զաստուածապարգև թագաւորութիւն քո, որդւովք և դստերօք, ընչիւք և ապրանօք, ծառայիւք և աղախնաւք, մինչեւ ի խորին ծերութիւն. և յետ աղցաւոր յաւիտենից՝ ի ժամանել բնութեանս կետի դասեսցէ զքեզ Տէր ընդ սրբազան թագաւորաց՝ բազմել ընդ Քրիստոսի ի սեղան Հօր իւրոյ. Որում փառք և երկրպագութիւն ընդ Հօր իւրում և Հոգւոյն Սրբոյ, յարակայ խոստովանութեամբ անզրաւ յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ գիրս ի դուռն Ս. Էջմիածնայ, ի թվին ՌՁԱ, յաւգոս. ամսոյ Լ։

ԵՍ ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳՐԵՑԻ ՁԵՌԱՄԲ ԻՄՈՎ։